Խմբագրություն՝ *7*
Վերջին փոփոխության ամսաթիվ՝ *21.08.23թ.*

1. «Արարատ-Կոմֆորտ» ավանդ

Ներդրվող նվազագույն գումար	500,000 ՀՀ դրամ, 1,000 ԱՄՆ դոլար և 1.000 Եվրո		
Ներդրվող առավելագույն գումար	100,000,000 ՀՀ դրամ, 200,000 ԱՄՆ դոլար և 200.000 Եվրո		
Ժամկետ	3 տարի		
Տարեկան տոկոսադրույք	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
	9.5%	4%	2.25%
Տարեկան տոկոսային եկամտաբերություն	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
	9.92%	4.07%	2.27%
Տոկոսագումարների վճարման եղանակ*	Ամսական		
Ավանդի գումարի համալրում**	Թույլատրվում է պայմանագրի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում, բացառությամբ ավանդի մարման ժամկետին նախորդող 90 օրվա		
Ավանդի գումարի նվազեցում***	• ավանդի ներդրման օրվանից մինչև 180 օր ժամանակահատվածում՝ տարեկան 0.1%-ով: • ավանդի ներդրման օրվանից 180 օրը լրանալուց հետո՝ առանց հաշվեգրված և/կամ վճարված տոկոսագումարների վերահաշվարկի		

*Տոկոսագումարների վճարումն իրականացվում է ամսական պարբերականությամբ: Ըստ հաճախորդի ցանկության՝ տոկոսագումարները կվճարվեն.

- ավելացնելով ավանդի գումարին (կապիտալացում)
- ավանդատուի բանկային կամ քարտային հաշվին

**Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում բոլոր համալրումների (բացառությամբ տոկոսագումարների կապիտալացման գումարների) ընդհանուր գումարը չի կարող գերազանցել ավանդի սկզբնական գումարը:

***Թույլատրվում է ավանդի գումարի նվազեցում մասնակի կամ ամբողջությամբ պայմանագրի գործողության ողջ ընթացքում նվազեցվող գումարի վրա.

- Ավանդի ներդրման օրվանից միչև 180 օր ժամանակահատվածում՝ վերահաշվարկ է լինում տարեկան 0,1% դրույքաչափով:
- Ավանդի ներդրման օրվանից 180 օրը լրանալուց հետո՝ առանց հաշվեգրված և/կամ վճարված տոկոսագումարների վերահաշվարկի (համաձայն պայմանագրով սահմանված տոկոսադրույքի)
- 181 և ավելի դեպքում վերահաշվարկի տոկոս չի կիրառվում

Ուշադրություն. մինչև 180 օրը մասնակի կամ ամբողջությամբ խզված գումարի դեպքում ավել վճարված տոկոսագումարները գանձվում են վերադարձվող կամ նվազեցվող ավանդի գումարից:
Նվազեցվող գումարի դիմաց տոկոսագումարների հաշվեգրումն իրականացվում է ավանդի ներդրման հաջորդ օրվանից մինչև հետ պահանջելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի (փաստացի օրացուցային օրերի) համար:

Ուշադրություն. *Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանաք Դուք՝ Ձեր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում: Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգին կարող եք ծանոթանալ այստեղ:*

Պահանջվող փաստաթղթեր

ՀՀ տարածքում ստեղծված և/կամ գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ

- Կանոնադրության պատճեն՝ ներառյալ փոփոխությունները
- Պետական գրանցման վկայականի պատճեն (ներդիրներով),
- Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) հավաստող փաստաթղթի պատճեն, եթե ՀՎՀՀ-ն արտացոլված չէ ներկայացվող պետական գրանցման վկայականում,
- Լիցենզիայի պատճեն (եթե իրականացվում է լիցենզավորման ենթակա գործունեություն),
- Տեղեկատվություն Հաճախորդի մասնակիցների (հիմնադիրների) վերաբերյալ (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դեպքում՝ ներկայացվում է մասնակիցների ցանկը, որն արտացոլված է կանոնադրությանը կից հավելվածում կամ մասնակիցները գրանցված են ներկայացվող պետական ռեգիստրի վկայականին կից ներդիրում (ներդիրներում), բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ ներկայացվում է տեղեկանք բաժնետերերի ռեեստրից՝ 10% և ավելի բաժնետերերի վերաբերյալ) (ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակցի (հիմնադիրի, բաժնետիրոջ) դեպքում՝ անձնագիրը թարգմանված հայերեն, նոտարական վավերացմամբ (անձնագրի թարգմանություն չի պահանջվում, եթե ներկայացվում է իրավասու մարմնի կողմից տրամադրված ՀՀ հատուկ անձնագիր, կացության քարտ կամ միջազգայնորեն ճանաչված անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ)),
- Ստորագրության իրավունքով օժտվող անձանց պաշտոնի ստանձնման հիմքերի պատճենները:

Հիմքերի պատճենները չեն պահանջվում, եթե նշված անձինք գրանցված են ներկայացվող պետական ռեգիստրի վկայականին կից ներդիրում (ներդիրներում),

- ստորագրության իրավունքով օժտվող անձանց անձնագրերի և նույնականացման քարտերի (ոչ ռեզիդենտի դեպքում՝ անձնագիրը թարգմանված հայերեն, նոտարական վավերացմամբ (անձնագրի թարգմանություն չի պահանջվում, եթե ներկայացվում է իրավասու մարմնի կողմից տրամադրված ՀՀ հատուկ անձնագիր, կացության քարտ կամ միջազգայնորեն ճանաչված անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ)) պատճենները:

ՀՀ տարածքից դուրս ստեղծված և գործող ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ

- Հաճախորդի հիմնադիր փաստաթղթերի փաթեթը՝ թարգմանությունների բնօրինակները նոտարական վավերացմամբ,
- Հաճախորդի իրավական կարգավիճակը սահմանող և պետական գրանցումն ու հարկային մարմիններում հաշվառված լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթերի թարգմանությունների բնօրինակները՝ նոտարական վավերացմամբ,
- Լիցենզիայի թարգմանության բնօրինակը՝ նոտարական վավերացմամբ (եթե իրականացվում է լիցենզավորման ենթակա գործունեություն),
- Տեղեկատվություն կազմակերպության մասնակիցների (հիմնադիրների) վերաբերյալ, փաստաթղթերի թարգմանությունների բնօրինակները՝ նոտարական վավերացմամբ (ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակցի (հիմնադիրի) դեպքում՝ անձնագիրը թարգմանված հայերեն, նոտարական վավերացմամբ (անձնագրի թարգմանություն չի պահանջվում, եթե ներկայացվում է իրավասու մարմնի կողմից տրամադրված ՀՀ հատուկ անձնագիր, կացության քարտ կամ միջազգայնորեն ճանաչված անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ)),
- Ստորագրության իրավունքով օժտվող անձանց անձնագրերի պատճենները և/ կամ նույնականացման քարտերը (ոչ ռեզիդենտի դեպքում՝ անձնագիրը թարգմանված հայերեն, նոտարական վավերացմամբ),
- Հաշվի դրամական միջոցները տնօրինելու լիազորված անձի դեպքում լիազորագիր՝ ստորագրված և կնքված կազմակերպության կնիքով (առկայության դեպքում):

Կարևոր է իմանալ

- Կուտակված տոկոսագումարները հաշվեգրվում են ավանդի գումարին կամ հաճախորդի կողմից նշված բանկային կամ քարտային հաշվին
- Տոկոսագումարները վճարվում են տվյալ ավանդատեսակի համար սահմանված սկզբնական նվազագույն գումարի և ավանդի գործողության ընթացքում կատարված ավանադին համալրումների/ տոկոսի կապիտալացումների/ կամ նվազեցումների հիման վրա
- Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը

- Երբ ժամկետային ավանդը ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը կամ մինչև ավանդային պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, ավանդատուի տոկոսները վճարվում են բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով: Այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված է տոկոսների այլ չափ, ապա տրվում է հայտարարություն այդ մասին
- Երբ ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ժամկետային ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, պայմանագիրը երկարաձգված է համարվում ցպահանջ ավանդի պայմաններով: Այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված է այլ բան
- Ավանդային հաշվին կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա ավանդի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:
- Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդը բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
- Եթե ավանդային պայմանագրում նշված ժամկետի ավարտից հետո ԱՎԱՆԴԱՏՈՒՆ չի պահանջում վերադարձնել ԱՎԱՆԴԸ, ապա ԱՎԱՆԴԻ գումարը ԲԱՆԿԸ փոխադրում է ԱՎԱՆԴԱՏՈՒԻ անվամբ ԲԱՆԿՈՒՄ բացված բանկային հաշվին, որի գումարի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ ԲԱՆԿՈՒՄ գործող սակագների: Պայմանագրով նախատեսված ժամկետում տոկոսն ԱՎԱՆԴԱՏՈՒԻ կողմից չստանալու դեպքում, ԲԱՆԿՆ այդ գումարը փոխադրում է ԱՎԱՆԴԱՏՈՒԻ անվամբ ԲԱՆԿՈՒՄ բացված բանկային հաշվին, որի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ ԲԱՆԿՈՒՄ գործող սակագների:
- Ավանդային պայմանագրով որոշված տոկոսների չափը, որը ավանդատուն ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, բանկը չի կարող միակողմանի նվազեցնել

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ Ձեր նախընտրած եղանակով փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

2.Ժամկետային ավանդ

Ավանդի տեսակ	Ժամկետային

Ավանդի նվազագույն գումար		100.000ՀՀ դրամ, 200 ԱՄՆ դոլար, 200 Եվրո		
Արժույթ		**ՀՀ դրամ**	**ԱՄՆ դոլար**	**Եվրո**
45-90 **օր ժամկետով**	**Տարեկան տոկոսադրույք**	5.5%	0.5%	0.25%
	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	5.6%	0.5%	0.25%
91-180 **օր ժամկետով**	**Տարեկան տոկոսադրույք**	6.5%	1.5%	0.75%
	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	6.68%	1.51%	0.75%
181-270 **օր ժամկետո**	**Տարեկան տոկոսադրույք**	7.5%	2.25%	1.25%
	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	7.75%	2.27%	1.26%
271-365 **օր ժամկետով**	**Տարեկան տոկոսադրույք**	8.5%	3.25%	1.75%
	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	8.84%	3.3%	1.76%
366-546 **օր ժամկետով**	**Տարեկան տոկոսադրույք**	10%	4.25%	2.5%
	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	10.47%	4.33%	2.53%
546-730 **օր ժամկետով**	**Տարեկան տոկոսադրույք**	10.25%	4.5%	2.6%
	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	10.75%	4.59%	2.63%

Ուշադրություն. *Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանաք Դուք՝ Ձեր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում:*

Պահանջվող փաստաթղթեր

ՀՀ տարածքում ստեղծված և/կամ գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ

- Կանոնադրության պատճեն՝ ներառյալ փոփոխությունները
- Պետական գրանցման վկայականի պատճեն (ներդիրներով),
- Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) հավաստող փաստաթղթի պատճեն, եթե ՀՎՀՀ-ն արտացոլված չէ ներկայացվող պետական գրանցման վկայականում,
- Լիցենզիայի պատճեն (եթե իրականացվում է լիցենզավորման ենթակա գործունեություն),
- Տեղեկատվություն Հաճախորդի մասնակիցների (հիմնադիրների) վերաբերյալ (սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության դեպքում՝ ներկայացվում է մասնակիցների ցանկը, որն արտացոլված է կանոնադրությանը կից հավելվածում կամ մասնակիցները գրանցված են ներկայացվող պետական ռեգիստրի վկայականին կից ներդիրում (ներդիրներում), բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ ներկայացվում է տեղեկանք բաժնետերերի ռեեստրից՝ 10% և ավելի բաժնետերերի վերաբերյալ) (ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակցի (հիմնադիրի, բաժնետիրոջ) դեպքում՝ անձնագիրը թարգմանված հայերեն, նոտարական վավերացմամբ (անձնագրի թարգմանություն չի պահանջվում, եթե ներկայացվում է իրավասու մարմնի կողմից տրամադրված ՀՀ հատուկ անձնագիր, կացության քարտ կամ միջազգայնորեն ճանաչված անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ)),

- Ստորագրության իրավունքով օժտվող անձանց պաշտոնի ստանձնման հիմքերի պատճենները: Հիմքերի պատճենները չեն պահանջվում, եթե նշված անձինք գրանցված են ներկայացվող պետական ռեգիստրի վկայականին կից ներդիրում (ներդիրներում),
- ստորագրության իրավունքով օժտվող անձանց անձնագրերի և նույնականացման քարտերի (ոչ ռեզիդենտի դեպքում՝ անձնագիրը թարգմանված հայերեն, նոտարական վավերացմամբ (անձնագրի թարգմանություն չի պահանջվում, եթե ներկայացվում է իրավասու մարմնի կողմից տրամադրված ՀՀ հատուկ անձնագիր, կացության քարտ կամ միջազգայնորեն ճանաչված անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ)) պատճենները:

ՀՀ տարածքից դուրս ստեղծված և գործող ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ

- Հաճախորդի հիմնադիր փաստաթղթերի փաթեթը՝ թարգմանությունների բնօրինակները նոտարական վավերացմամբ,
- Հաճախորդի իրավական կարգավիճակը սահմանող և պետական գրանցումն ու հարկային մարմիններում հաշվառված լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթերի թարգմանությունների բնօրինակները՝ նոտարական վավերացմամբ,
- Լիցենզիայի թարգմանության բնօրինակը՝ նոտարական վավերացմամբ (եթե իրականացվում է լիցենզավորման ենթակա գործունեություն),
- Տեղեկատվություն կազմակերպության մասնակիցների (հիմնադիրների) վերաբերյալ, փաստաթղթերի թարգմանությունների բնօրինակները՝ նոտարական վավերացմամբ (ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակցի (հիմնադիրի) դեպքում՝ անձնագիրը թարգմանված հայերեն, նոտարական վավերացմամբ (անձնագրի թարգմանություն չի պահանջվում, եթե ներկայացվում է իրավասու մարմնի կողմից տրամադրված ՀՀ հատուկ անձնագիր, կացության քարտ կամ միջազգայնորեն ճանաչված անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ)),
- Ստորագրության իրավունքով օժտվող անձանց անձնագրերի պատճենները և/ կամ նույնականացման քարտերը (ոչ ռեզիդենտի դեպքում՝ անձնագիրը թարգմանված հայերեն, նոտարական վավերացմամբ),
- Հաշվի դրամական միջոցները տնօրինելու լիազորված անձի դեպքում լիազորագիր՝ ստորագրված և կնքված կազմակերպության կնիքով (առկայության դեպքում):

Կարևոր է իմանալ

- Ավանդատուի համար բանկային հաշիվները բացվում են անվճար: Պայմանագիրը մարվելուց 1 ամիս անց պայմանագրի չկնքման պարագայում, ընթացիկ հաշիվը դառնում է վճարովի՝ ըստ բանկում գործող սակագնի
- 100,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարով ավանդների ներգրավման դեպքում տոկոսադրույքները կսահմանվեն պայմանագրային հիմունքներով
- 731 օր և ավել ժամկետով ներդնելու դեպքում տոկոսադրույքները կսահմանվեն պայմանագրային հիմունքներով
- Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդը բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
- Պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ ավանդատուի կողմից ավանդի գումարը կամ դրա մի մասը (պայմանագիրը դադարեցվում է ամբողջությամբ) ետ պահանջելու դեպքում հաշվարկվում է տարեկան ցպահանջ ավանդի տոկոսադրույքով, իսկ արդեն վճարված տոկոսագումարները պահվում են վերադարձվող ավանդի գումարից
- Ցպահանջ ավանդի տոկոսադրույքը սահմանվում է տարեկան 0.1%
- Կուտակված տոկոսագումարները չեն հաշվեգրվում ավանդի գումարին:
- Ավանդային պայմանագրով որոշված տոկոսների չափը, որը ավանդատուն ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, բանկը չի կարող միակողմանի նվազեցնել:
- Եթե ավանդային պայմանագրում նշված ժամկետի ավարտից հետո ԱՎԱՆԴԱՏՈՒՆ չի պահանջում վերադարձնել ԱՎԱՆԴԸ, ապա ԱՎԱՆԴԻ գումարը ԲԱՆԿԸ փոխադրում է ԱՎԱՆԴԱՏՈՒԻ անվամբ ԲԱՆԿՈՒՄ բացված բանկային հաշվին, որի գումարի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ ԲԱՆԿՈՒՄ գործող սակագների: Պայմանագրով նախատեսված ժամկետում տոկոսն ԱՎԱՆԴԱՏՈՒԻ կողմից չստանալու դեպքում, ԲԱՆԿՆ այդ գումարը փոխադրում է ԱՎԱՆԴԱՏՈՒԻ անվամբ ԲԱՆԿՈՒՄ բացված բանկային հաշվին, որի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ ԲԱՆԿՈՒՄ գործող սակագների:
- Երբ ժամկետային ավանդը ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը կամ մինչև ավանդային պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, ավանդատուի տոկոսները վճարվում են բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով: Այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված է տոկոսների այլ չափ, ապա տրվում է հայտարարություն այդ մասին
- Երբ ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ժամկետային ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, պայմանագիրը երկարաձգված է համարվում

ցպահանջ ավանդի պայմաններով:

- Հաշվի նվազագույն մնացորդի չափ չի սահմանվում, ինչպես նաև հաշվից գանձվելիք կամ ավանդատուի կողմից վճարվելիք սակագներ և տուժանքներ առկա չեն ավանդի գործողության ամբողջ ժամանակահատվածում:

Ուշադրություն. *Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանաք Դուք՝ Ձեր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում: Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգին կարող եք ծանոթանալ այստեղ:*

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ Ձեր նախընտրած եղանակով փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

3. Կուտակային ավանդ

Ավանդի տեսակ		Ժամկետային			
Արժույթ	**Ավանդի նվազագույն գումար**	**Տարեկան տոկոսադրույք**	**Տարեկան տոկոսային եկամտաբերություն**	**Ամսական համալրման նվազագույն չափ**	**Ավանդի համալրման վերջնաժամկետ (Ավանդի ժամկետի ավարտի ցառաջ)**
91-180 **օր ժամկետով**					
ՀՀ դրամ	10.000	5.5%	5.5%	7.000	30 օր
ԱՄՆ դոլար	30	0.5%	0.5%	15	
181-270 **օր ժամկետով**					
ՀՀ դրամ	10.000	6.5%	6.5%	5.000	30 օր
ԱՄՆ դոլար	30	1.5%	1.5%	10	

271-365 **օր ժամկետով**					
ՀՀ դրամ	10.000	8%	8%	5.000	30 օր
ԱՄՆ դոլար	30	2.5%	2.5%	10	
366-459 **օր ժամկետով**					
ՀՀ դրամ	10.000	9%	9%	5.000	30 օր
ԱՄՆ դոլար	30	3.5%	3.5%	10	

Կուտակվող ավանդի առավելագույն չափը կարող է լինել 100,000,000 ՀՀ դրամ կամ 200,000 ԱՄՆ դոլար:

Ուշադրություն. *Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանաք Դուք՝ Ձեր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում:*

Պահանջվող փաստաթղթեր

ՀՀ տարածքում ստեղծված և/կամ գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ

- Կանոնադրության պատճեն՝ ներառյալ փոփոխությունները
- Պետական գրանցման վկայականի պատճեն (ներդիրներով),
- Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) հավաստող փաստաթղթի պատճեն, եթե ՀՎՀՀ-ն արտացոլված չէ ներկայացվող պետական գրանցման վկայականում,
- Լիցենզիայի պատճեն (եթե իրականացվում է լիցենզավորման ենթակա գործունեություն),
- Տեղեկատվություն Հաճախորդի մասնակիցների (հիմնադիրների) վերաբերյալ (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դեպքում՝ ներկայացվում է մասնակիցների ցանկը, որն արտացոլված է կանոնադրությանը կից հավելվածում կամ մասնակիցները գրանցված են ներկայացվող պետական ռեգիստրի վկայականին կից ներդիրում (ներդիրներում), բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ ներկայացվում է տեղեկանք բաժնետերերի ռեեստրից՝ 10% և ավելի բաժնետերերի վերաբերյալ) (ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակցի (հիմնադիրի, բաժնետիրոջ) դեպքում՝ անձնագիրը թարգմանված հայերեն, նոտարական վավերացմամբ (անձնագրի թարգմանություն չի պահանջվում, եթե ներկայացվում է իրավասու մարմնի կողմից տրամադրված ՀՀ հատուկ անձնագիր, կացության քարտ կամ միջազգայնորեն ճանաչված անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ)),
- Ստորագրության իրավունքով օժտվող անձանց պաշտոնի ստանձնման հիմքերի պատճենները: Հիմքերի պատճենները չեն պահանջվում, եթե նշված անձինք գրանցված են ներկայացվող պետական ռեգիստրի վկայականին կից ներդիրում (ներդիրներում),

- ստորագրության իրավունքով օժտվող անձանց անձնագրերի և նույնականացման քարտերի (ոչ ռեզիդենտի դեպքում՝ անձնագիրը թարգմանված հայերեն, նոտարական վավերացմամբ (անձնագրի թարգմանություն չի պահանջվում, եթե ներկայացվում է իրավասու մարմնի կողմից տրամադրված ՀՀ հատուկ անձնագիր, կացության քարտ կամ միջազգայնորեն ճանաչված անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ)) պատճենները:

ՀՀ տարածքից դուրս ստեղծված և գործող ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ

- Հաճախորդի հիմնադիր փաստաթղթերի փաթեթը՝ թարգմանությունների բնօրինակները նոտարական վավերացմամբ,
- Հաճախորդի իրավական կարգավիճակը սահմանող և պետական գրանցումն ու հարկային մարմիններում հաշվառված լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթերի թարգմանությունների բնօրինակները՝ նոտարական վավերացմամբ,
- Լիցենզիայի թարգմանության բնօրինակը՝ նոտարական վավերացմամբ (եթե իրականացվում է լիցենզավորման ենթակա գործունեություն),
- Տեղեկատվություն կազմակերպության մասնակիցների (հիմնադիրների) վերաբերյալ, փաստաթղթերի թարգմանությունների բնօրինակները՝ նոտարական վավերացմամբ (ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ մասնակցի (հիմնադիրի) դեպքում՝ անձնագիրը թարգմանված հայերեն, նոտարական վավերացմամբ (անձնագրի թարգմանություն չի պահանջվում, եթե ներկայացվում է իրավասու մարմնի կողմից տրամադրված ՀՀ հատուկ անձնագիր, կացության քարտ կամ միջազգայնորեն ճանաչված անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ)),
- Ստորագրության իրավունքով օժտվող անձանց անձնագրերի պատճենները և/ կամ նույնականացման քարտերը (ոչ ռեզիդենտի դեպքում՝ անձնագիրը թարգմանված հայերեն, նոտարական վավերացմամբ),
- Հաշվի դրամական միջոցները տնօրինելու լիազորված անձի դեպքում լիազորագիր՝ ստորագրված և կնքված կազմակերպության կնիքով (առկայության դեպքում):

Կարևոր է իմանալ

- Ավանդատուի համար բանկային հաշիվները բացվում են անվճար: Պայմանագիրը մարվելուց 1 ամիս անց պայմանագրի չկնքման պարագայում, ընթացիկ հաշիվը դառնում է վճարովի՝ ըստ բանկում գործող սակագնի:
- Քարտային հաշիվները բացվում են անվճար՝ համաձայն ավանդատուներին պլաստիկ քարտերի տրամադրման պայմանների: Պայմաններին կարող եք ծանոթանալ «Պլաստիկ քարտեր ավանդատուներին» բաժնում:
- Տոկոսագումարը վճարվում է ավանդային պայմանագրի ժամկետի ավարտին:
- Կուտակված տոկոսագումարները չեն հաշվեգրվում ավանդի գումարին:
- Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդը բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս

գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:

- Ավանդային հաշվին կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա ավանդի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:
- Պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ ավանդատուի կողմից ավանդի գումարը կամ դրա մի մասը (պայմանագիրը դադարեցվում է ամբողջությամբ) ետ պահանջելու դեպքում հաշվարկվում է տարեկան ցպահանջ ավանդի տոկոսադրույքով
- Ցպահանջ ավանդի տոկոսադրույքը սահմանվում է տարեկան 0.1% տոկոս
- 460 օր և ավելի դեպքում ներգրավման դեպքում տոկոսադրույքները կսահմանվեն պայմանագրային հիմունքներով
- Համալրումները կարող են կատարվել ցանկացած ժամանակ մինչև ավանդային պայմանագրի ժամկետի ավարտին նախորդող 30-րդ օրը:
- Ավանդային պայմանագրով որոշված տոկոսների չափը, որը ավանդատուն ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, բանկը չի կարող միակողմանի նվազեցնել:
- Հաշվարկված տոկոսները վճարման պահին ենթակա են հարկման «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով, ընդ որում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն այս դեպքում հանդիսանում է հարկային գործակալ՝ եկամտային հարկի գծով:
- Եթե ավանդային պայմանագրում նշված ժամկետի ավարտից հետո ԱՎԱՆԴԱՏՈՒՆ չի պահանջում վերադարձնել ԱՎԱՆԴԸ, ապա ԱՎԱՆԴԻ գումարը ԲԱՆԿԸ փոխադրում է ԱՎԱՆԴԱՏՈՒԻ անվամբ ԲԱՆԿՈՒՄ բացված բանկային հաշվին, որի գումարի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ ԲԱՆԿՈՒՄ գործող սակագների: Պայմանագրով նախատեսված ժամկետում տոկոսն ԱՎԱՆԴԱՏՈՒԻ կողմից չստանալու դեպքում, ԲԱՆԿՆ այդ գումարը փոխադրում է ԱՎԱՆԴԱՏՈՒԻ անվամբ ԲԱՆԿՈՒՄ բացված բանկային հաշվին, որի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ ԲԱՆԿՈՒՄ գործող սակագների:
- Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ
- Հաշվի նվազագույն մնացորդի չափ չի սահմանվում, ինչպես նաև հաշվից գանձվելիք կամ ավանդատուի կողմից վճարվելիք սակագներ և տուժանքներ առկա չեն ավանդի գործողության ամբողջ ժամանակահատվածում:

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ Ձեր նախընտրած եղանակով փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն: